# Հայաստանի նկարիչները

## ՍՏԵՓԱՆ ԱՂԱՋԱՆԵԱՆ

*Աղաջանեանն սկսել է նկարել 20 տարեկանից: Վրձինել է նա գլխաւորապէս պորտրէտներ և մասամբ էլ պէյզաժներ: Նա ունի համարձակ վրձին եւ հարուստ, ինքնուրոյն տեխնիկա:*

*Իր պորտրէտներով տալիս է նա գլխաւորապէս Արեւելքի տիպերը, բընոյթագրում է նրանց ներքին հոգեկան աշխարհը, նկարագիրը: Նրա այդ նկարներից ուշագրաւ են «Նկարչի մօտ պատկերը» (գտնւում է Երեւանի կենտր. Թանգարանում), «Պօրտրէ» (նկարչի կնոջ), «Մտախոհ ռուս կինը», «Հայուհու գլխանկար» եւն.:*

*Այժմ Աղաջանեանը վրձինում է կատարելագործուած պորտրէտներ, որոնց ետեւում տեսնում էք դուք կազմակերպուած, որոշ ուղղութեամբ՝ իրապաշտ եւ վարպետ նկարչին:* Ա. Ե.



Իր կնոջ կենդանագիրը.– *Ստ. Աղաջանեան*

digitised by A.R.A.R.@